



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԷԿՈՊԱՐԵԿԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ
ՊԵՏ

« 18 » « 09 » 2025թ.

N 1500 - ձ

Հ Ր Ա Մ Ա Ն

ԷԿՈՊԱՐԵԿԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ
ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Էկոպարեկային ծառայության մասին» օրենքի 7-րդ հոդվածի
1-ին մասի 3-րդ կետը, շրջակա միջավայրի նախարարի 2024 թվականի հունվարի 11-
ի N 14-Լ հրամանի հավելվածի 17-րդ կետի 10-րդ ենթակետը.

Հրամայում եմ՝

1. Հաստատել էկոպարեկային ծառայությունում ծառայության կազմակերպման
և իրականացման կարգը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:
3. Սույն հրամանի գործողությունն ուժի մեջ մտնելուց հետո տարածվում է
էկոպարեկային ծառայության ՀՀ Սյունիքի մարզային վարչության վրա, իսկ մյուս
մարզային վարչությունների վրա՝ դրանց կազմավորման պահից:



X

ՎԼԱԴԻՄԻՐ ԿԻՐԱԿՈՍՅԱՆ

Подписано: KIRAKOSYAN VLADIMIR 1104840278 Վ. Կիրակոսյան

« _____ » « _____ » 2025թ.
ք. Երևան

Հավելված

Էկոպարեկային ծառայության պետի

2025 թվականի անդրեմեմբերի 18-ի N 1500 - Լ հրամանի

Կ Ա Ր Գ

ԷԿՈՊԱՐԵԿԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով սահմանվում են Հայաստանի Հանրապետության շրջակա միջավայրի նախարարության էկոպարեկային ծառայության (այսուհետ՝ Ծառայություն) կողմից՝ մարզային վարչություններում և դրանց տեղամասերում ծառայության կազմակերպման և իրականացման կարգը:

2. Ծառայությունը իրականացվում է շուրջօրյա՝ ծառայողներից ստորաբաժանումներում նշանակված հերթափոխի ծառայողների (կարգախմբի) միջոցով:

3. Ծառայությունն ապահովում է՝

1) պետական անտառների, անտառային հողերի և բնության հատուկ պահպանվող տարածքների պահպանությունը,

2) օրենսդրությամբ սահմանված իրավասության սահմաններում անտառային ու բնության հատուկ պահպանվող տարածքների օրենսդրության (այսուհետ՝ Օրենսդրություն) խախտումների կանխումը, կանխարգելումը, հայտնաբերումը,

3) պետական անտառների, անտառային հողերի և բնության հատուկ պահպանվող տարածքների պահպանության կանոնների պահպանումը, անտառներում և բնության հատուկ պահպանվող տարածքներում հրդեհային անվտանգության նկատմամբ հսկողության իրականացումը,

4) Հայաստանի Հանրապետությունում բնության հատուկ պահպանվող տարածքների էկոհամակարգերի և դրանց բաղադրիչների պահպանությունը,

քնականոն զարգացման վրա մարդածին բացասական ազդեցության կանխարգելումը կամ մեղմացումը:

2. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

2.1. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ

4. Ծառայություն իրականացնում են Ծառայության տարածքային ստորաբաժանումների (մարզային վարչությունների, դրանց տեղամասերի և օպերատիվ կառավարման կենտրոնի) ծառայողները:

5. Հերթափոխի ծառայողներն անմիջականորեն ենթարկվում են հերթափոխի ավագին, օպերատիվ կառավարման կենտրոնին: Ծառայողները ենթարկվում են անմիջական ղեկավարին, մարզային վարչության պետի տեղակալներին, մարզային վարչության պետին, Ծառայության պետի տեղակալներին, Ծառայության պետին:

6. Ծառայությունը կազմակերպելու համար մարզային վարչության պետի կողմից ներկայացվում են երթուղիները, որոնք հաստատվում են Ծառայության պետի կողմից: Երթուղիների ուղղությունները որոշվում են՝ ելնելով պայմաններից, տեղանքից և օպերատիվ իրավիճակից:

7. Սահմանված երթուղիների վերաբերյալ փաստաթղթերն անմիջապես տրամադրվում են տեղամասերի պետերին և ներկայացվում են օպերատիվ կառավարման կենտրոն:

8. Ծառայողի անձնական պաշտպանության և հատուկ միջոցների մեջ ներառվում են՝

- 1) հակազազ,
- 2) շնչադիմակ,
- 3) սաղավարտ,
- 4) հրակայուն բաճկոն,
- 5) վերջույթների հրակայուն պաշտպանական միջոցներ,
- 6) ռետինե մահակ,
- 7) ձեռնաշղթա,
- 8) մեխանիկական փոշեցրիչ,
- 9) անբոզոլային սարքեր:

9. Ծառայողը ծառայության ընթացքում կրում է սահմանված ձևի համազգեստ և պարտավոր է իր մոտ ունենալ ծառայողական վկայական:

2.2. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՍԿԻԶԲԸ ՈՒ ԱՎԱՐՏԸ

10. Կարգախմբի ծառայողներին հրահանգավորում է տեղամասի պետի կողմից նշանակված հերթափոխի ավագը:

11. Իր ծառայողական պարտականությունները կատարելու համար ծառայողը ծառայության (տեղամաս) է ներկայանում իր հերթափոխի սկզբին: Ծառայության ներկայանալիս ծառայողը պարտավոր է գտնվել սթափ վիճակում՝ չգտնվելով ալկոհոլի կամ հոգեմեդիկամենտների միջոցների ազդեցության տակ:

12. Ծառայության ներկայանալիս ծառայողը զեկուցում է հերթափոխի ավագին կամ տեղամասի պետին՝ վերջինիս դիմելով ազգանունով: Հրահանգավորումն անցկացնելուց առաջ հրահանգավորողը պարզում է ծառայողների ինքնազգացողությունն ու ծառայության իրականացմանը խոչընդոտող հանգամանքները: Այն դեպքում, երբ պարզվում է, որ ծառայողն ի վիճակի չէ իրականացնել ծառայությունը, նա ազատվում է ծառայությունից և նրա փոխարեն ծառայության է ներգրավվում մեկ այլ ծառայող, որի վերաբերյալ հերթափոխի ավագն անմիջապես գրավոր զեկուցում է տեղամասի պետին:

13. Հրահանգավորումից առաջ ծառայողը հերթափոխի տեսուչից ստանում է զենքը, փամփուշտները, հանդերձանքը, համազգեստին ամրացվող շարժական տեսախցիկը, կապի, անհատական պաշտպանության և հատուկ միջոցները, որի վերաբերյալ ստորագրում է համապատասխան գրանցամատյաններում:

14. Զենքը և փամփուշտները ստանալիս զենքը պետք է լինի լիցքաթափված վիճակում, իսկ փամփուշտակալը՝ դատարկ (չլիցքավորված):

15. Ծառայողական պարտականությունների ավարտից հետո կարգախմբերը վերադառնում են տեղամաս: Հերթափոխն ընդունող ծառայողները նախորդ հերթափոխից ընդունում են տրանսպորտային միջոցները՝ անհրաժեշտության դեպքում՝ հերթափոխի ավագի հսկողությամբ, ստուգում են նաև տրանսպորտային միջոցի, սարքավորումների և հակահրդեհային միջոցների առկայությունն ու դրանց սարքին լինելը:

16. Իրենց ծառայողական պարտականությունների կատարումն ավարտած ծառայողները տեղամաս վերադառնալուն պես զենքը, փամփուշտները, հանդերձանքը, համազգեստին ամրացվող շարժական տեսախցիկը, կապի, անհատական պաշտպանության և հատուկ միջոցները, ինչպես նաև հերթապահության ընթացքում կազմած արձանագրությունները հանձնում են հերթափոխի տեսուչին: Վերջինս նշված գույքը և փաստաթղթերը ընդունում է՝ հանձնման-ընդունման վերաբերյալ համապատասխան գրառում կատարելով գրանցամատյանում:

17. Ձենքը և փամփուշտները հանձնելիս զենքը պետք է լինի լիցքաթափված վիճակում, իսկ փամփուշտակալը՝ դատարկ (չլիցքավորված): Ձենքի լիցքաթափումն ու ստուգումը կատարվում են հրահանգով՝ հերթափոխի տեսուչի հսկողությամբ, դրա համար հատուկ հատկացված վայրում:

18. Հինանոցի հանձնում-ընդունումը կատարվում է հերթափոխը հանձնող և նոր հերթափոխն ընդունող հերթափոխի տեսուչների միջև և արձանագրվում է զինանոցի հանձնման-ընդունման գրանցամատյանում: Բացահայտված անհամապատասխանությունների դեպքում հերթափոխն ընդունող տեսուչն անմիջապես կազմում է արձանագրություն և անհապաղ ներկայացնում է տեղամասի պետին:

19. Տրանսպորտային միջոցի, դրանում տեղադրված սարքերի, անօդաչու թռչող սարքերի, զենքի, հանդերձանքի, համազգեստին ամրացվող շարժական տեսախցիկի, կապի, անհատական պաշտպանության և հատուկ միջոցների անսարքության, վնասման, ամբողջականության խաթարման, կորստի կամ փամփուշտների օգտագործման դեպքերի մասին հերթափոխի ծառայողներն անհապաղ զեկուցում են հերթափոխի ավագին, իսկ հերթափոխը հանձնելիս՝ ներկայացնում են գրավոր զեկուցագիր՝ հասցեագրված տեղամասի պետին, որը հանձնում են հերթափոխի տեսուչին:

20. Ծառայողին արգելվում է մերկացնել կամ որևէ կերպ փոփոխության ենթարկել զենքը, տրանսպորտային միջոցը, դրանում տեղադրված սարքերը, անօդաչու թռչող սարքերը, հանդերձանքը, համազգեստին ամրացվող շարժական տեսախցիկը, կապի, անհատական պաշտպանության և հատուկ միջոցները, ինչպես նաև դրանք փոխանցել այլ անձանց կամ թողնել առանց հսկողության՝ բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերի:

21. Գրանցամատյանների ձևերը, դրանց վարման կարգը հաստատում է Ծառայության պետը:

2.3. ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ՍՏՈՒԳՈՒՄՆ ՈՒ ՀՐԱՀԱՆԳԱՎՈՐՈՒՄԸ

22. Ծառայողական պարտականություններն ստանձնելուց առաջ իրականացվում է հերթափոխն ընդունող անձնակազմի ստուգում, այդ թվում՝ իրավունքների և պարտականությունների պարզաբանում ու հրահանգավորում, որն ամրագրվում է համապատասխան մատյանում՝ անձնակազմի ստորագրությամբ:

23. Առանձին դեպքերում անձնակազմի ստուգում և հրահանգավորում կարող են իրականացնել նաև տարածքային (մարզային) ստորաբաժանման պետը և նրա տեղակալները, տեղամասի պետը:

24. Հրահանգավորողը պարտավոր է՝

1) ստուգել ծառայողների պատրաստվածությունը և կազմակերպել հայտնաբերված թերությունների վերացումը,

2) ստուգել ծառայողների արտաքին տեսքը, համազգեստ կրելու կանոնները պահպանելը, բացառել սահմանված կարգի խախտմամբ, այդ թվում՝ վնասված կամ անխնամ ծառայողական համազգեստ կրող ծառայողի կողմից ծառայության իրականացումը,

3) ծառայողներից տեղեկանալ ծառայողների համազգեստին ամրացվող շարժական տեսախցիկների և տեխնիկական միջոցների սարքինության մասին,

4) ստուգել ծառայողների բարոյահոգեբանական վիճակը և խնդիրների հայտնաբերման դեպքում թույլ չտալ համապատասխան ծառայողին ստանձնել ծառայողական պարտականությունները,

5) ծառայողներին ծանոթացնել իրենց տեղամասի օպերատիվ իրավիճակին:

25. Անձնակազմի ստուգումը և հրահանգավորումն ավարտվում է անձնակազմին հերթափոխի մեկնելու հրահանգով:

26. Հրահանգավորման ավարտի մասին հրահանգավորողը կամ տեղամասի պետը զեկուցում է օպերատիվ կառավարման կենտրոն՝ հայտնելով նաև նախորդ հերթափոխի ավարտի մասին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՁԵՎԵՐՆ ՈՒ ԵՂԱՆԱԿՆԵՐԸ

27. Ծառայության իրականացման ձևերն են՝

- 1) տրանսպորտային միջոցով (ամենագնաց, մոտորանավակ, ուղղաթիռ),
- 2) հետիոտն,
- 3) անօդաչու թռչող սարքերի միջոցով,
- 4) ձիով,
- 5) անշարժ հենակետերում:

28. Կարգախմբում ընդգրկվում են առնվազն երկու ծառայող:

29. Կարգախմբի ավագ նշանակվում է տեղամասի պետի կողմից՝ նախապես կամ հրահանգավորողի կողմից՝ հրահանգավորման ավարտին: Կարգախմբի ավագ նշանակելու համար հաշվի են առնվում ծառայողի պաշտոնը, ստաժը կամ այլ անձնային որակներ:

30. Ծառայություն իրականացնող տրանսպորտային միջոցներն ունեն հատուկ գունագրաֆիկ երանգավորում, առկայծող փարոսիկներ և ձայնային ազդանշաններ, կահավորված են հետևյալ տեխնիկական սարքերով ու միջոցներով՝

- 1) տրանսպորտային միջոցի մեջ տեղադրվող ստացիոնար ռադիոկայան,
- 2) ձեռքի դյուրակիր ռադիոկայան՝ հավելյալ մարտկոցով և լիցքավորիչով,
- 3) LTE երթուղիչ,
- 4) տրանսպորտային միջոցի GPS սարք վառելիքի ծախսի ցուցիչով,
- 5) լուսաձայնային համակարգ,
- 6) առկայծող փարոսիկներ,
- 7) ուղղորդված սպիտակ պտտվող, շարժական լույս,
- 8) համակարգչային դյուրակիր պլանշետ իր լիցքավորիչով,
- 9) պլանշետի ստեղնաշար,
- 10) 12V-220V փոխակերպիչ,
- 11) տրանսպորտային միջոցի սրահում տեղադրվող սարքերի լիցքավորման համար լրացուցիչ USB 5V, կրակմարիչի 12V և 220V բնիկներ,
- 12) կրակմարիչ փոքր,
- 13) կրակմարիչ մեծ,
- 14) անհետաձգելի առաջին օգնության դեղատուփ,

15) հեռադիտակ,

16) հրդեհաշիջման ռետինե թակիչներ,

17) կացին,

18) մեքենայի վրա տեղադրվող ջրի հավաքովի տարա,

19) ռետինե փողրակ,

20) խողովակների միացման մասեր,

21) հակահրդեհային խողովակ,

22) ապօրինի հատված ծառերի կոճղերի հաշվառման մուրճ:

31. Տրանսպորտային միջոցում տեղադրված տեսանկարահանող, գտնվելու վայրը և երթևեկության ուղղությունը ցույց տվող սարքավորումները չեն անջատվում, իսկ համազգեստին ամրացվող շարժական տեսախցիկը միացվում է այն ստանալուց անմիջապես հետո և չի անջատվում մինչև հերթափոխի ավարտին համապատասխան հրահանգ ստանալը:

32. Ծառայության ընթացքում տեսաձայնագրումը, տեսանկարահանումը և լուսանկարահանումն իրականացվում են միայն ծառայողական (ոչ անձնական) տեխնիկական միջոցներով: Բացառություն կարող է լինել միայն այն դեպքում, երբ ծառայողական տեխնիկական միջոցն անսարք է կամ որևէ այլ հիմնավոր պատճառով հնարավոր չէ այն կիրառել:

33. Կարգախումբը կարող է փոփոխել իր երթուղին հերթափոխի ավագի հանձնարարությամբ, իսկ անհրաժեշտության դեպքում՝ օպերատիվ կառավարման կենտրոնի հանձնարարության հիման վրա: Այլ դեպքերում երթուղու փոփոխությունը թույլատրվում է միայն հերթափոխի ավագին զեկուցելուց և նրա թույլտվությունն ստանալուց հետո (բացառությամբ երթուղու աննշան փոփոխությունների) հետևյալ դեպքերում՝

1) հարևան տեղամասերում անհետաձգելի գործողություններ իրականացնելու նպատակով,

2) իրավախախտում կատարած անձին պետական անտառներում, անտառային հողերում, բնության հատուկ պահպանվող տարածքներում և հարակից տարածքներում հետապնդելու, բռնելու կամ արգելանքի վերցնելու, ինչպես նաև նրան ոստիկանության վարչական շենք կամ այլ պետական մարմնի վարչական տարածք տեղափոխելու նպատակով,

- 3) այլ կարգախմբերին կամ իրավապահ մարմիններին աջակցելիս,
 - 4) տրանսպորտային միջոցները հետապնդելիս,
 - 5) իրավախախտումների կամ պատահարների ժամանակ տուժածներին օգնություն ցուցաբերելիս,
 - 6) իրավախախտման դեպքի վայրը պահպանելիս,
 - 7) հրդեհի և տարերային աղետների հետևանքների վերացման համար միջոցներ ձեռնարկելիս,
 - 8) ծառայողի ինքնազգացողության վատթարացման դեպքում,
 - 9) ծառայության ընթացքում տրանսպորտային միջոցի կամ տեխնիկական սարքերի աշխատանքը խափանվելու դեպքում,
 - 10) ընդմիջման ժամին սնունդ ընդունելու նպատակով,
 - 11) անհետաձգելի այլ դեպքերում:
34. Ծառայությունն իրականացվում է բացահայտ:

4. ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ԵՎ ՈՒԺԵՐԻ ՏԵՂԱԲԱՇԽՈՒՄԸ

35. Ծառայության իրականացման վայրում անձնակազմը տեղակայվում է ըստ սահմանված տեղամասերի՝ ծառայողների սահմանված քանակին համապատասխան:

36. Ծառայողների ծառայության իրականացման վայրի (երթուղու) ընտրությունն իրականացվում է մարզային վարչության պետի կողմից՝ հաշվի առնելով տվյալ տարածքի առանձնահատկությունները, ծառայողների քանակն ու նյութատեխնիկական հագեցվածությունը, ինչպես նաև տարածքներում արձանագրված իրավախախտումների վիճակագրությունը:

37. Ծառայությունն իրականացվում է շուրջօրյա՝ 24, 12 կամ 8 ժամ տևողությամբ հերթափոխերով: Հերթափոխերի քանակը, տևողությունը և կարգախմբերի աշխատանքային գրաֆիկը որոշում է Ծառայության գլխավոր քարտուղարը՝ ելնելով ծառայողական խնդիրների իրականացման անհրաժեշտությունից:

5. ԾԱՌԱՅՈՂԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

38. Ծառայողի իրավունքներն ու պարտականությունները սահմանված են «Էկոպարեկային ծառայության մասին» օրենքով, սույն կարգով և այլ իրավական ակտերով:

39. Սույն կարգով և այլ ակտերով սահմանված դեպքերում կարգախմբի կողմից ծառայության վայրը թողնելու յուրաքանչյուր դեպքում՝ թույլտվություն ստանալու համար, ծառայություն իրականացնող կարգախումբն անմիջապես կապ է հաստատում հերթափոխի ավագի հետ և տեղեկացնում ծառայության վայրը թողնելու պատճառների մասին: Վերջինս իր հերթին անմիջապես գեկուցում է օպերատիվ կառավարման կենտրոն և ըստ վերադասության: Հերթափոխի ավագի հետ կապվելու անհնարինության դեպքում կարգախումբը թույլտվություն ստանալու նպատակով կապ է հաստատում օպերատիվ կառավարման կենտրոնի հետ:

40. Ծառայողն իր ծառայողական պարտականությունները կատարելիս պարտավոր է՝

1) պահպանել օրինականությունը, իր լիազորությունների շրջանակներում պաշտպանել քաղաքացիների (մարդու) իրավունքներն ու օրինական շահերը և դրանք սահմանափակել բացառապես օրենքով սահմանված դեպքերում և կարգով՝ հնարավորության դեպքում՝ անհապաղ ներկայացնելով սահմանափակման հիմքերն ու պատճառները,

2) քաղաքացիներին դիմելիս ներկայանալ՝ հայտնելով պաշտոնը, ազգանունը և ստորաբաժանումը, ինչպես նաև քաղաքացու պահանջով ներկայացնել նաև ծառայողական վկայականը,

3) պահպանել ծառայողական կարգապահությունը, ինչպես նաև քաղաքացիների հետ շփման ընթացքում էթիկայի և բարեվարքության կանոնները, դրսևորել հարգալից վերաբերմունք, ծառայողին վայել վստահ գործելաոճ, աջակցել վերջիններիս իրենց դիմելու դեպքում, ինչպես նաև ուղղորդել, եթե քաղաքացու դիմումը կամ խնդրանքը դուրս է իրենց ծառայողական պարտականություններից,

4) խնամքով վերաբերվել քաղաքացիների փաստաթղթերին, բացառել դրանցում որևէ նշում կատարելը, իսկ ներկայացված փաստաթղթերում ցանկացած այլ իրերի կամ

փաստաթղթերի առկայության դեպքում՝ անմիջապես վերադարձնել դրանք ներկայացրած անձին,

5) ենթադրյալ իրավախախտման մասին տեղեկություններ ստանալու կամ իրավախախտման դեպք հայտնաբերելու դեպքում՝ այդ մասին անմիջապես զեկուցել հերթափոխի ավագին և ձեռնարկել օրենքով սահմանված միջոցներ,

6) օգնություն ցույց տալ իրավախախտումներից կամ պատահարներից տուժած անձանց, ինչպես նաև այն անձանց, ում կյանքին կամ առողջությանը վտանգ է սպառնում,

7) տիրապետել տեղամասի օպերատիվ իրադրությանը,

8) իր կամ մեկ այլ անձի կողմից գտնված փաստաթղթերը և իրերը ներկայացնել մոտակա ոստիկանության տարածքային ստորաբաժանում,

9) ուշադրություն դարձնել կոնֆլիկտային իրավիճակներին, իրավախախտների հնարավոր հայտնվելու վայրերին, կասկածելի աղմուկներին, իր կողմից պահպանվող տարածքում կրակի կամ ծխի հայտնվելուն՝ անհրաժեշտության դեպքում արձագանքելու համար,

10) տարածքում գտնվող անձանց տեղեկացնել արձանագրված վտանգների, անսպասելի դիսկերի և ճանապարհի անանցանելիության մասին,

11) իրականացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և սույն կարգով սահմանված այլ պարտականություններ:

41. Հերթափոխի ավարտին ծառայողները պարտավոր են հերթափոխի ընթացքում տեղի ունեցած միջադեպերի մասին հանգամանալից տեղեկացնել հերթափոխի ավագին՝ կազմելով համապատասխան զեկուցագիր:

42. Ծառայողն իր առջև դրված խնդիրների արդյունավետ և պատշաճ լուծման նպատակով պարտավոր է իմանալ՝

1) գործող օրենսդրությունը և իր գործունեությանն առնչվող այլ իրավական ակտերը,

2) իր տեղամասի կողմից պահպանվող տարածքների առանձնահատկությունները,

3) կապի միջոցներից օգտվելու և տեղեկատվության փոխանցման եղանակներն ու կանոնները,

4) իր տեղամասին հարակից գտնվող ոստիկանության և այլ ծառայությունների ստորաբաժանումների, բժշկական կենտրոնների, ավտոկայանատեղիների և ծառայությունների մատուցման այլ կետերի տեղակայման վայրերը:

43. Ծառայողին ծառայողական պարտականությունների կատարման ընթացքում արգելվում է՝

1) ծառայողական տրանսպորտային միջոցով տեղափոխել ծառայողական պարտականությունների իրականացման հետ առնչություն չունեցող անձանց (բացառությամբ նրանց, ում օգնություն է ցուցաբերվում) կամ իրեր,

2) առանց հերթափոխի ավագի թույլտվության շեղվել սահմանված երթուղուց կամ սեփական նախաձեռնությամբ փոխել աշխատանքային գրաֆիկը,

3) արգելանքի վերցված անձանց թողնել առանց հսկողության,

4) ծառայողական պարտականությունների կատարման ընթացքում՝ սահմանված ընդմիջման ժամից դուրս, կատարել ծառայության հետ կապ չունեցող ցանկացած այլ գործողություն, որը կապված չէ իր առջև դրված խնդիրների կատարման հետ կամ անաչառ դիտորդի մոտ կարող է կասկածի տակ դնել ծառայողի կարգապահությունը, ինչպես նաև Ծառայության արդյունավետությունն ու հեղինակությունը,

5) անհարկի զրուցել քաղաքացիների հետ, ոչ նպատակային օգտագործել ծառայողական տրանսպորտային միջոցն ու իրեն վստահված միջոցները,

6) այլ անձանց տիրապետմանը հանձնել ծառայողական տրանսպորտային միջոցն և իրեն հատկացված ծառայողական զենքը, տեխնիկական սարքավորումները, անհատական պաշտպանության ու հատուկ միջոցները:

44. Ծառայողը, ծառայության մեջ գտնվելու, ինչպես նաև ծառայության մեջ չլինելու, արձակուրդում կամ ժամանակավոր անաշխատունակության դեպքում, պարտավոր է հնարավորինս շուտ տեղեկացնել տեղամասի պետին իր հետ կատարված միջադեպերի, դժբախտ պատահարների, պետական մարմիններ իրեն հրավիրելու, ինչպես նաև նմանատիպ բոլոր իրավիճակների մասին: Տեղամասի պետը նման դեպքերում պարտավոր է ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ՝ ծառայության (հերթափոխի) քնականոն ընթացքն ապահովելու համար՝ դեպքի մասին զեկուցելով իր վերադասին:

45. Նշանակված ծառայողական քննությունների ընթացքում Ծառայողը պարտավոր է տալ միայն ճշմարտացի բացատրություններ և զերծ մնալ այնպիսի

գործողություններից կամ անգործությունից, որոնք կարող են վարկաբեկել ծառայության հեղինակությունը:

46. Ծառայողը պարտավոր է իր հերթափոխն իրականացնել իր տեղամասի, իսկ անհրաժեշտության դեպքում՝ նաև այլ մարզային վարչության տեղամասի կողմից պահպանվող տարածքում:

5.1. ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՀԵՏ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

47. Ծառայողի գործունեությունը հիմնվում է օրենքի գերակայության, մարդու պատիվը և արժանապատվությունը հարգելու, օրենքի առջև հավասարության, մարդասիրության, հրապարակայնության և թափանցիկության սկզբունքների վրա:

5.2. ԾԱՌԱՅՈՂԻ՝ ՔԱՂԱՔԱՑՈՒՆ ԴԻՄԵԼՈՒ ԿԱՐԳԸ

48. Ծառայողը պետք է քաղաքացուն դիմի հարգանքով, «Դուք»-ով, իր պահանջներն ու դիտողությունները ներկայացնի համոզիչ: Քաղաքացուն դիմելիս պետք է նրան ողջունի, որից հետո ներկայացնի իր պաշտոնը, ազգանունն ու ստորաբաժանումը: Եթե քաղաքացիներն են դիմում ծառայողին, ապա նա պարտավոր է ուշադիր լսել նրանց և միջոցներ ձեռնարկել՝ վերջիններիս հարցադրումների հետ կապված: Եթե քաղաքացու հարցադրումը դուրս է ծառայողի իրավասությունների շրջանակից, ապա ծառայողը պարտավոր է ուղղորդել՝ տալով հնարավորինս սպառիչ պատասխան իր հարցադրման ճիշտ հասցեատիրոջ վերաբերյալ:

49. Քաղաքացիներին դիմելիս անթույլատրելի են՝

- 1) արհամարհական տոնը, կուպտությունը, գոռոզությունը,
- 2) դիտողությունների հեզնական կամ անքաղաքավարի շարադրումը,
- 3) մարդու արժանապատվությունը վիրավորող արտահայտությունները,
- 4) սպառնալիքները, նախատումները,
- 5) սպառնացող կամ վիրավորող ժեստերն ու նշանները,
- 6) բազմիմաստ և ենթատեքստ պարունակող արտահայտությունները:

50. Քաղաքացիների հետ գյուցելիս ծառայողները պարտավոր են դրսևորել հանգստություն և խոհեմություն, և չպետք է իրենց գործողություններում ցուցաբերեն անձնական անբարյացակամ վերաբերմունք:

51. Երբ իրավախախտում կատարած անձը ծառայողի դիտողություններին արձագանքում է բորբոքված, ապա պետք է նրան հանդարտվելու համար ողջամիտ ժամանակ տալ և բացատրել նրա հակաիրավական գործողությունների հնարավոր իրավական հետևանքները:

52. Անչափահասներին դիտողություններն արվում են՝ հաշվի առնելով նրանց հոգեբանությունն ու ընկալելու հնարավորությունը:

5.3. ԾԱՌԱՅՈՂԻ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔՆ ԱՅԼ ԱՆՁԱՆՑ ԿՈՂՄԻՑ ՏԵՍԱՁԱՅՆԱԳՐԵԼՈՒ ԿԱՄ ԼՈՒՍԱՆԿԱՐԱՀԱՆՔԵԼՈՒ ՀԵՏ ԿԱՊԱՄԾ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱՆՈՆՆԵՐԸ

53. Ծառայության իրականացման ընթացքում ծառայողն իրավունք չունի քաղաքացիներից պահանջել դադարեցնել տեսաձայնագրումը կամ լուսանկարահանումը կամ ուղիղ հեռարձակումը՝ հաշվի առնելով ազատ գործելու մարդու իրավունքը, ինչպես նաև հանրության համար հասանելի և թափանցիկ ծառայություն իրականացնելը:

54. Սույն կարգի 53-րդ կետով սահմանված պահանջը չի գործում, եթե այդպիսի գործողությունները՝

1) ողջամտորեն խախտում են այլ անձանց իրավունքները (օրինակ՝ այլ անձի անձնական տվյալներն առանց վերջինիս համաձայնության հասանելի է դարձնում անորոշ թվով անձանց և այլն),

2) խոչընդոտում են ծառայողական պարտականությունների իրականացմանը (օրինակ՝ դեպքի վայրում ապացույցների նկարահանումները և այլն),

3) վտանգում են նկարահանողի կամ այլ անձանց կյանքը կամ առողջությունը:

55. Նման դեպքերում ծառայողը կարող է ներկայացնել պահանջ՝ սույն կարգի 53-րդ կետով նախատեսված գործողությունները դադարեցնելու կամ այդ

գործողությունների կատարումը 54-րդ կետով նկարագրված իրավիճակների առաջացումը բացառող պայմաններում իրականացնելու վերաբերյալ:

5.4.ԾԱՌԱՅՈՂԻ ԿՈՂՄԻՑ ՖԻԶԻԿԱԿԱՆ ՈՒԺ, ՀԱՏՈՒԿ ՄԻՋՈՑՆԵՐ ԵՎ ՁԵՆՔ ԳՈՐԾԱԴՐԵԼԸ

56. Ծառայողի կողմից ֆիզիկական ուժի, հատուկ միջոցների ու զենքի գործադրման հիմքերը, պայմանները և սահմաններն սահմանված են «Էկոպարեկային ծառայության մասին» օրենքով:

5.5. ԿԱՐԳԱԽՄԻ ԻՐ ԳՈՐԾԸՆԿԵՐ-ԾԱՌԱՅՈՂԻ, ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻ ԵՎ ԱՅԼ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՀԵՏ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄԸ

57. Ծառայողը պարտավոր է մշտական հաղորդակցման մեջ գտնվել կարգախմբի իր գործընկերոջ հետ, նրանք մշտապես պետք է գտնվեն միմյանց տեսադաշտում: Եթե ծառայողներից մեկը լքում է տրանսպորտային միջոցը, մյուսը պետք է հետևի նրան՝ անհրաժեշտության դեպքում օգնություն ցուցաբերելու համար: Կարգախմբի ծառայողները, առանց ծայրահեղ անհրաժեշտության, չպետք է գտնվեն միմյանցից մեծ տարածության վրա:

58. Ենթադրյալ իրավախախտների նկատմամբ ներգործության ընթացքում կարգախմբի ծառայողները պետք է գործեն՝ փոխհամաձայնեցված:

59. Ծառայողը ռադիոկապի կամ այլ հասանելի կապի միջոցով մշտապես կապ է պահպանում հերթափոխի ավագի հետ: Յուրաքանչյուր երկու ժամը մեկ տեղեկացնում է իր գտնվելու վայրի և տարածքում տիրող իրավիճակի մասին: Ընդմիջման կարող է գնալ միայն հերթափոխի ավագի, իսկ նրա հետ կապ հաստատելու անհնարինության դեպքում՝ օպերատիվ կառավարման կենտրոնի համաձայնությամբ:

6. ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԻՐԱՎԱԽԱՆՏՈՒՄՆԵՐԻ, ԵՆԹԱԴՐՅԱԼ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՊԱՏԱՀԱՐՆԵՐԻ ԴԵՊՔՈՒՄ

6.1. ՀԱՂՈՐԴՈՒՄԸ

60. Կարգախմբի կողմից հայտնաբերված կամ ստացած իրավախախտումների և պատահարների վերաբերյալ հաղորդումներ ներկայացնելու հետ կապված հարաբերությունները սահմանված են «Էկոլոգիային ծառայության մասին» օրենքով:

6.2. ԻՐԱՎԱԽԱՆՏՄԱՆ ԴԵՊՔԻ ՎԱՅՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

61. Իրավախախտման դեպքի վայրում ծառայողները մինչև համապատասխան պաշտոնատար անձի ժամանումը պարտավոր են՝

- 1) միջոցներ ձեռնարկել նոր իրավախախտման կանխման համար,
- 2) հետապնդել իրավախախտման կատարման մեջ կասկածվող անձանց,
- 3) օգնություն ցույց տալ տուժածներին, անհրաժեշտության դեպքում՝ կանչել շտապ օգնություն կամ փրկարար ծառայություն,
- 4) հնարավորության դեպքում՝ պարզել ականատեսների ինքնությունները,
- 5) պահպանել իրավախախտման դեպքի վայրը՝ մինչև դրա անհրաժեշտության վերանայը:

62. Ժամանելով դեպքի վայր՝ ծառայողներն անմիջապես արգելում են այլ անձանց մոտենալը դեպքի վայր: Դեպքի վայր հասնելուց հետո սույն կարգի 61-րդ կետում նշված գործողությունների հերթականությունը կախված է կատարված իրավախախտման բնույթից, կարգախմբի կազմից և ստեղծված իրավիճակից:

63. Սույն կարգի 62-րդ կետի պահանջները խախտած ցանկացած անձի նկատմամբ ծառայողներն իրավասու են կիրառել օրենքով սահմանված ներգործության միջոցներ:

64. Պետական անտառներում, անտառային հողերում, բնության հատուկ պահպանվող տարածքներում և դրանց հարակից տարածքներում իրավախախտում կատարած անձի հետապնդումն իրականացվում է մինչև նրա փախուստը կանխելը: Հետապնդման անհնարինության կամ ձախողվելու դեպքում ծառայողը պարտավոր է

հերթափոխի ավագին կամ օպերատիվ կառավարման կենտրոնին փոխանցել իրեն հայտնի տեղեկությունները: Հետապնդման ընթացքում կարգախմբերը պարտավոր են գործել՝ պահպանելով նախազգուշական միջոցները:

65. Իրավախախտում կատարած անձի հետապնդման դեպքում կարգախումբն անմիջապես այդ մասին տեղեկացնում է հերթափոխի ավագին: Հետապնդման ընթացքում, հնարավորության դեպքում, դեպքի վայրը պահպանվում է նաև Ծառայության հարևան կարգախմբերի կամ այլ ծառայողների ներգրավմամբ:

66. Հետապնդման անհնարինության կամ ձախողվելու դեպքում ծառայողն անհապաղ զեկուցում է հերթափոխի ավագին և կատարում վերջինիս կարգադրությունը:

67. Իրավապահ մարմինների համապատասխան ծառայողների կողմից դեպքի վայր ժամանելուց հետո գործողությունների կառավարումն իրականացվում է վերջիններիս կողմից: Անհրաժեշտության դեպքում ծառայողները կարող են օժանդակել գործողությունների կատարմանը:

68. Ծառայողներին արգելվում է դեպքի վայրում առկա առարկաներին դիպչել, տեղափոխել կամ փոփոխել դրանք՝ մինչև դեպքի վայրի զննություն կատարելու իրավասություն ունեցող անձի ժամանումը՝ բացառությամբ, եթե նման գործողությունների կատարումը կարող է պայմանավորված լինել անձանց կյանքի և առողջության պահպանմանը, եղանակային կամ այնպիսի օբյեկտիվ հանգամանքներով, որոնց ազդեցությամբ տեղի կունենա հնարավոր ապացույցների կորուստ: Նման դեպքերում ցանկացած միջամտություն թույլատրելի է բացառապես իրերի կամ առարկաների դիրքի տեսանկարահանման եղանակով նախնական ամրագրմամբ:

69. Ծառայողները պարտավոր են հատուկ ուշադրություն դարձնել իրադրության պահպանման և հանցագործության գործիքների անփոփոխ դիրքի, մատնահետքերի, ոտնահետքերի, տրանսպորտի, արնանման հետքերի, մազերի, հագուստի, ապակու բեկորների, փայտի կտորների, հողի մասնիկների, ծխուկների, լուցկու մնացորդների պահպանմանը:

70. Ծառայողը իրավախախտման դեպքի վայրում պարտավոր է գործել վճռականորեն, վստահ, թույլ չտալ շտապողականություն կամ այլ գործողություններ, որոնք կարող են հանգեցնել քաղաքացիների հետ փոխհարաբերությունների սրմանը:

71. Մինչև իրավապահ մարմինների համապատասխան ծառայողի ժամանելը դեպքի վայրի պահպանություն իրականացնող ծառայողը պարտավոր է հորդորել իրավախախտման վայրում գտնվող անձանց մնալ տեղում և չկատարել ինքնուրույն որևէ գործողություն: Նա փաստաթղթերով պարզում է նրանց ինքնությունը, գրանցում անձնական տվյալները: Բացի այդ՝ պարզում է ենթադրյալ իրավախախտում կատարած անձանց թիվը, նրանց արտաքին տեսքը, փախուստի հնարավոր ուղղությունները, իսկ տրանսպորտային միջոց օգտագործելու դեպքում՝ հաշվառման համարանիշը և նույնականացնող նշանները: Ծառայողը նաև արձանագրում է իրավախախտման վայրում կատարված փոփոխությունները, այդ փոփոխությունները կատարած անձանց և դրանց նպատակները:

72. Իրավապահ մարմինների համապատասխան ծառայողի ժամանման դեպքում ծառայողը հայտնում է իրավախախտմանը վերաբերող հանգամանքների, ձեռնարկված միջոցների մասին, որից հետո գործում է ըստ հերթափոխի ավագի կամ օպերատիվ կառավարման կենտրոնի հրահանգի:

73. Այն դեպքում, երբ իրավախախտումը կատարվել է տրանսպորտային միջոցի կիրառմամբ, ծառայողը վարորդին առաջարկում է բացել դրա դռները և բեռնախցիկի դուռը՝ արտաքին զննում կատարելու համար: Զննության արդյունքները ներառվում են արձանագրության մեջ:

6.3. ԱՆՁԱՆՑ ԱՐԳԵԼԱՆՔԻ ՎԵՐՑՆԵԼԸ

74. Հիմնավոր կասկածի առկայության դեպքում ենթադրյալ իրավախախտի վերաբերյալ գործողություններ նախաձեռնելիս՝ ծառայողը պետք է վերլուծի իր գործողությունների օրինականությունը, հաշվի առնի իր հնարավորությունները, պլանավորի անձի իրավունքների սահմանափակման եղանակը և դրա ճիշտ ձևը: Անձի իրավունքները սահմանափակելիս ծառայողը պարտավոր է հաշվի առնել՝

1) ենթադրյալ իրավախախտի անձը, նրա հնարավորությունները (ֆիզիկական ուժը և զինվածությունը), հնարավոր բարդությունները, զինված հարձակման կամ դիմադրության հնարավորությունը,

2) զենքի և հատուկ միջոցների կիրառման հիմքերն ու պայմանները,

3) զինված հարձակման կամ դիմադրության հնարավորությունը,

4) ինչպես նաև հետևել, որ անձը չվնասի իրեն, չնետի կամ չստանա առարկաներ:

75. Իրավախախտման կատարման մեջ կասկածվող անձանց արգելանքի վերցնելիս ծառայողը պարտավոր է հատուկ ուշադրություն դարձնել նրանց մոտ հրազենի կամ սառը զենքի առկայությանը: Օրենքով նախատեսված հիմքերի առկայության դեպքում ծառայողը պարտավոր է նախապես պատրաստ պահել իր զենքն՝ անհրաժեշտության դեպքում անմիջապես գործադրելու համար (պատյանը տեղափոխվում է զենքի օգտագործման համար հարմար դիրքի, ատրճանակը հանվում է ապահովիչից և փամփուշտը մղվում է փամփշտախցիկ):

76. Անձին արգելանքի վերցնելուց հետո ծառայողը պարտավոր է ազատությունից զրկված անձին ներկայացնել վերջինիս իրավունքներն ու պարտականությունները:

6.4. ԵՆԹԱԴՐՅԱԼ ԻՐԱՎԱՆԱԽՏԻ ՏԵՂԱՓՈԽՈՒՄԸ

77. Իրավախախտին ոստիկանության մոտակա տարածքային ստորաբաժանում են տեղափոխում ծառայողական տրանսպորտային միջոցով, իսկ դրա անհնարինության դեպքում՝ ծառայողի առաջարկությամբ՝ իրավաբանական կամ ֆիզիկական անձանց պատկանող տրանսպորտային միջոցներով՝ սեփականատիրոջ համաձայնությամբ: Չի թույլատրվում այդ նպատակով օգտագործել ընդհանուր օգտագործման տրանսպորտային միջոցներ, հատուկ նշանակության տրանսպորտային միջոցներ (հրշեջ, շտապօգնության), բացառությամբ այն դեպքերից, երբ անհրաժեշտ է բժշկական օգնություն ցուցաբերել, ինչպես նաև օտարերկրյա պետությունների դիվանագիտական կամ հյուպատոսական ներկայացուցչություններին և միջազգային կազմակերպություններին պատկանող տրանսպորտային միջոցներ:

78. Տրանսպորտային միջոցի կիրառմամբ իրավախախտման դեպքում ծառայողը տրանսպորտային միջոցը տնօրինողի կամ հնարավորության դեպքում՝ սեփականատիրոջ գրավոր համաձայնությամբ տրանսպորտային միջոցը տեղափոխում է պետական ենթակայության պահպանվող տարածք, կազմում է արձանագրություն, մեկ օրինակը հանձնում է տրանսպորտային միջոցի սեփականատիրոջը կամ տնօրինողին և տրանսպորտային միջոցը արձանագրությամբ հանձնում է պահպանվող տարածքի համապատասխան պատասխանատուին:

79. Իրավախախտման մեջ կասկածվող անձի հետ ոստիկանություն ժամանած ծառայողը ոստիկանության ստորաբաժանման ղեկավարին գրավոր դիմում է ներկայացնում՝ առերևույթ դեպքի հանգամանքների մասին:

7. ԾԱՌԱՅՈՂԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՎԱՐՋԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱՍՏՈՒՄՆԵՐԻ ԱՐՁԱՆԱԳՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿ

80. Վարչական իրավախախտման դեպք հայտնաբերելիս՝ ծառայողը մոտենում է համապատասխան խախտումը կատարած անձին, ներկայանում վերջինիս՝ հայտնելով իր պաշտոնը, ազգանունը և ստորաբաժանումը, տեղեկացնում տեսաձայնագրման մասին, ինչպես նաև ըստ անհրաժեշտության անձի պահանջով ներկայացնում է նաև իր ծառայողական վկայականը:

81. Ծառայողը վարչական իրավախախտում կատարած անձին հայտնում է, թե ինչ իրավախախտման մեջ է վերջինս կասկածվում, ինչպես է այն դրսևորվել, մատնանշում է համապատասխան իրավական նորմը, որով սահմանված է կատարված իրավախախտումը:

82. Ծառայողը վարչական իրավախախտում կատարած անձին տեղեկացնում է, որ դրսևորած վարքագիծն առաջացնում է վարչական պատասխանատվություն, որից հետո իրավախախտման վայրում ծառայողին ամրակցված պլանշետի հատուկ ծրագրային ապահովման միջոցով կամ պարզ թղթային եղանակով կազմում է Հայաստանի Հանրապետության շրջակա միջավայրի նախարարի 2024 թվականի մարտի 22-ի N 87-Ն հրամանով հաստատված պետական անտառներում, անտառային հողերում և բնության հատուկ պահպանվող տարածքներում պահպանության և անտառային ու բնության հատուկ պահպանվող տարածքների օրենսդրության խախտումների վերաբերյալ արձանագրություն և վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրություն, որոնց մեկական օրինակը տրամադրվում է իրավախախտումը կատարած անձին:

83. Իրավախախտման վայրում արձանագրությունը կազմելու օբյեկտիվ անհնարինության դեպքում ծառայողն արձանագրությունը կազմում է առաջին խսկ հնարավոր վայրում:

84. Վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրության մեջ՝ համապատասխան հատկացված հատվածում, իրավախախտում կատարած անձից ծառայողը վերցնում է բացատրություն: Ծառայողը իրավախախտին տեղեկացնում է դիտողություններ, առարկություններ ներկայացնելու իրավունքի վերաբերյալ՝ ապահովելով անձի լաված լինելու իրավունքի իրացումը: Բացատրում է վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքով սահմանված նրա իրավունքներն ու պարտականությունները:

85. Անձի լաված լինելու իրավունքի ապահովումից հետո, ծառայողն իրավախախտին տեղեկացնում է, որ վարչական գործի քննության տեղի և ժամի մասին նրան կծանուցվի վերջինիս հասցեով (առկայության դեպքում՝ էլեկտրոնային):

86. Ծառայողի կողմից վերցված՝ ապօրինի ձեռք բերված փայտանյութը, ոչ բնափայտային, երկրորդական անտառանյութը, որսված կենդանիները, որսի արգասիքը, բնական այլ ռեսուրսները, Օրենսդրությունը խախտող անձանց իրավախախտման գործիք կամ անմիջական օբյեկտ համարվող իրերն ու փաստաթղթերը տնօրինելու հետ կապված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հնարավետության կառավարության 2024 թվականի հուլիսի 4-ի N 1026-Ն որոշմամբ սահմանված կարգով:

8. ԾԱՌԱՅՈՐԻ ԱՆՁՆԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ

87. Անձնական անվտանգության ապահովման նպատակով ծառայողին արգելվում է՝

- 1) գտնվել ստուգման (զննման) ենթարկվող տրանսպորտային միջոցի սրահում՝ բացառությամբ սույն կարգով կամ օրենքով նախատեսված դեպքերի,
- 2) առանց անհրաժեշտության տրանսպորտային միջոցին շատ մոտ գտնվել,
- 3) տրանսպորտային միջոցին մոտենալ անմիջապես առջևից կամ հետնամասից,
- 4) քաղաքացիների և հատկապես ենթադրյալ իրավախախտների հետ որևէ կերպ առնչվելիս նրանց կանգնել մեջքով՝ հնարավորության դեպքում թույլ չտալով, որպեսզի իրեն մոտենան հետևից:

88. Գիշերային ժամերին տրանսպորտային միջոցներ կանգնեցնելու դեպքում ծառայողները լուսավորությունը պետք է ապահովեն ծառայողական ավտոմեքենայի լուսարձակներով կամ լապտերով:

89. Տրանսպորտային միջոցները կանգնեցնելու համար ծառայողները, ավտոմեքենայում գտնվելու դեպքում, պարտադիր պետք է միացնեն ավտոմեքենայի հատուկ լուսաձայնային ազդանշանները: Հնարավորության դեպքերում ծառայողները ծառայողական ավտոմեքենան կանգնեցնում են իրենց կողմից կանգնեցված տրանսպորտային միջոցի հետևում՝ անհրաժեշտության դեպքում պատրաստ լինելով սկսել հետապնդումը կամ կանխել հնարավոր մանևրները կանգնեցված տրանսպորտային միջոցի վարորդի կողմից:

90. Անձի փաստաթղթերի կամ տրանսպորտային միջոցի զննության ընթացքում ծառայողը պետք է անվտանգ հեռավորություն ընտրի իր և վարորդի, ինչպես նաև վարորդի հետ գտնվող անձանց միջև, ոչ մի դեպքում չշրջվի նրանց թիկունքով:

91. Ստուգման նպատակով կանգնեցված տրանսպորտային միջոցին մոտենալիս, անձնական անվտանգության նկատառումներից ելնելով, ծառայողը խստորեն պահպանում է հետևյալ կանոնները՝

- 1) տրանսպորտային միջոցին մոտենում է վարորդի դռան ուղղությամբ,
- 2) պահանջում է վարորդից անջատել մեքենայի շարժիչը,
- 3) զննում է տրանսպորտային միջոցի սրահը,
- 4) կանգնում է այնպիսի հեռավորությամբ, որ տրանսպորտային միջոցի անսպասելի շարժի դեպքում վնասվածք չստանա, միաժամանակ շարունակելով հետևել վարորդին և ուղևորներին, որպեսզի պահանջվող փաստաթղթերի փոխարեն ենթադրյալ իրավախախտի կողմից թաքցված զենք կամ վտանգ ներկայացնող այլ միջոցներ չկիրառվեն,

5) ներկայացված փաստաթղթերը բռնում է այն ձեռքում, որ օրենքով սահմանված դեպքերում հնարավորություն ունենա առանց խոչընդոտների և արդյունավետորեն կիրառել ծառայողական զենք:

92. Կարգախմբի վարորդը մնում է իր տեղում և ապահովում է ստուգումն իրականացնող ծառայողի անվտանգությունը:

9. ԶԱՆԳԱԾԱՅԻՆ ԼՐԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻ ՀԵՏ ՇՓՈՒՄՆԵՐԸ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ

93. Զանգվածային լրատվության միջոցների (այսուհետ՝ ԶԼՄ) ներկայացուցիչների հետ շփումները կարևոր են Ծառայության գործունեության հրապարակայնությունն ապահովելու սկզբունքի տեսանկյունից: ԶԼՄ-ների ներկայացուցիչների հետ շփումներում ծառայողը պարտավոր է՝

- 1) լինել քաղաքավարի, ուշադիր և բարյացակամ,
- 2) չխոչընդոտել ԶԼՄ-ների ներկայացուցիչների մասնագիտական գործունեությանը և պաշտպանել նրանց իրավունքները,
- 3) եթե, ելնելով ծառայողական շահերից, ծառայողը նպատակահարմար չի համարում կամ չի կարող պատասխանել լրագրողի հարցերին կամ այլ կերպ տեղեկատվություն տալ, ապա ծառայողը առաջարկում է դիմել Ծառայության՝ ԶԼՄ-ների հետ կապերի իրավասու անձին,
- 4) ԶԼՄ-ների հետ ցանկացած շփման մասին հայտնել հերթափոխի ավագին:

10. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄԸ

94. Ծառայության կազմակերպման և իրականացման նկատմամբ հսկողությունը Ծառայության խնդիրների լուծման գործում անձնակազմի ակտիվ մասնակցության, իրավախախտումների կանխման, կանխարգելման և բացահայտման կարևորագույն տարրերից մեկն է:

95. Հսկողությունն ու մշտադիտարկումն իրականացվում են Ծառայության պետի, նրա տեղակալների, ներքին անվտանգության վարչության կողմից՝ պարբերական ստուգումների անցկացման միջոցով, որի ընթացքում ստուգվում են՝

- 1) տարածքային ստորաբաժանումների ծառայության կազմակերպման և իրականացման որակը,
- 2) երթուղիներում կարգախմբերի առկայությունը,
- 3) իրավախախտումների կանխման, կանխարգելման և բացահայտման գործում կարգախմբերի ակտիվությունը և կատարվող ծառայության որակը,

4) համագործակցությունն այլ կարգախմբերի միջև, ինչպես նաև պետական և տեղական ինքնակառավարման այլ մարմինների հետ,

5) կարգախմբերի կողմից կարգապահության և օրինականության, քաղաքացիների հետ շփվելիս էթիկայի և բարեվարքության կանոնների պահպանումը,

6) երթուղու տարածքում կատարված իրավախախտումների դեպքերով ձեռնարկված միջոցները,

7) ծառայողական փաստաթղթերի ձևակերպման պատշաճությունը,

8) ծառայության բոլոր ստորաբաժանումների գործունեությունը,

9) անձնակազմի վարքագծի կանոնները, տեղեկատվական անվտանգության պահպանումը և ստորաբաժանումներում իրականացող ծառայությունը:

96. Մարզային վարչություններում ծառայության ստուգումը կարող է լինել պլանավորված և չպլանավորված:

97. Պլանավորված ստուգման ժամանակացույցը հաստատում է Ծառայության պետը:

98. Ծառայության կատարման և կազմակերպման գործում թերություններ հայտնաբերելու դեպքում ուսումնասիրություն իրականացնող համապատասխան պաշտոնատար անձը միջոցներ է ձեռնարկում դրանց վերացման ուղղությամբ:

99. Ուսումնասիրություն իրականացնող համապատասխան պաշտոնատար անձն ուսումնասիրության արդյունքների մասին զեկուցում է իր վերադասին՝ հետագա ընթացքը որոշելու համար:

100. Ծառայություն իրականացնելիս խախտումներ կամ թերացումներ թույլ տված ծառայողի հետ բացատրական աշխատանքներ է տանում տեղամասի պետը՝ դրանց կրկնությունը բացառելու նպատակով:

11. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ Ի ՀԱՅՏ ԵԿԱԾ ԴԵՊՔԵՐԻ ԶԵԿՈՒՑՈՒՄԸ

101. Ծառայողը ծառայության ընթացքում հայտնաբերած յուրաքանչյուր դեպքի մասին ռադիոկապի կամ այլ հասանելի կապի միջոցով զեկուցում է հերթափոխի ավագին: Այն դեպքերը, իրավախախտումները, միջադեպերը, որոնք իրենց բնույթով կարող են հետագա զարգացումներ կամ բարդություններ ունենալ, կամ որոնք լրացուցիչ

ուժերի կամ միջոցների ներգրավում են ակնկալում (բարդ դեպքեր)՝ զեկուցվում են հերթափոխի ավագին, որն էլ իր հերթին անմիջապես զեկուցում է օպերատիվ կառավարման կենտրոն, իսկ օպերատիվ կառավարման կենտրոնը՝ ներքին անվտանգության վարչության պետին:

102. Բարդ դեպքերի մասին զեկուցվում է նաև վերադասության կարգով ոլորտը համակարգող Ծառայության պետի տեղակալին:

12. ՍԱՀՄԱՆԱՅԻՆ ԵՎ ՌԱԶՄԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՆՏԱՌՆԵՐՈՒՄ ՈՒ ԱՆՏԱՌԱՅԻՆ ՀՈՂԵՐՈՒՄ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆԸ

103. Սահմանային և ռազմական նշանակության անտառներում ու անտառային հողերում ծառայությունն իրականացվում է «Սահմանային և ռազմական նշանակության անտառների ու անտառային հողերի օգտագործման կարգը սահմանելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի օգոստոսի 14 N 907-Ն որոշման, «Պետական սահմանի մասին» և «Պետական գաղտնիքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների և ոլորտը կարգավորող այլ իրավական ակտերի համաձայն: